

Հ Ա Խ Հ Ա Խ Փ Ո Ղ Ե Ո Մ Ս  
N 34 Ս ա 6 լ ու ս գ ր ա պ ա ր ա ն հ N 34

ԲԺ. Ա. Բ. Ա Լ Ե Ք Ս Ա Ն Ց Ա Ն

# Բ Ծ Ա Վ Ա Ռ Ո Ր Տ Ի Ֆ

Պ Ե Տ Հ Ր Ա Տ — Բ Ժ Հ Ր Ա Տ Բ Ո Ժ Ի Ն  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն — 1 9 3 4

616.9  
Ա-27

30 JUL 2010

ՀԱՅՀԱ Ա.Գ.ԺՈՂՈՎՐԴՈՒՄ  
Խ 34 ՍՊԵԼՈՒՄ ԳՐԱԴԱՐԱՆ Խ 34

616.9  
Ա-29  
ԿՐ.

ԲԺ. Ա. Բ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

# բԾԱՎՈՐ ՏԻԹ

14988  
9001

3858

(ԱԿԱՐՆԵՐՈՎ)

ՊԵՏԱԿԱՆ - ԲՈՒԺՀԱՑԲԱԺՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ - 1934



1 FEB 2013

6537

## ԲԾԱՎՈՐ ՏԻՖ

Բծավոր տիֆը կենցաղային վարակիչ հիվանդություն ե։ Նա սերտ կերպով կապված և կուլտուր-կենցաղային պայմանների հետ։ Բծավոր տիֆի լիկիդացիան, նրա հնոցների լիակատար վոչնչացումը մի ռեալ և անպայման լուծելի խնդիր ե հանդիսանում։

Բծավոր տիֆի դեմ մղվող պայքարին պետք ե մաւակից անել վոչ միայն առողջաւության որդանները, վոչ միայն ովկուական իշխանության որդանները, այլև բոլոր հասարակական կազմակերպությունները և առաջին հերթին՝ այն բոլոր կազմակերպությունները, վորոնք առնչություն ունեն բնակչության կուլտուրական մակարդակը բարձրացնելու, կենցաղային պայմանները բարելավելու գործի հետ։

Բծավոր տիֆը մարդու տարածված հիվանդություններից մեկն ե հանդիսանում։

Խնչպես հայտնի յե, բծավոր տիֆը սուր վարակիչ հիվանդություն ե։ Այդ հիվանդությունը յերկար չի տևում, այլ միանգամից սկսվելով՝ վորոշ թվով որեր անցնելուց հետո վերջանում ե և, սովորաբար, այլևս չի կրկնվում։ Այդ հիվանդությունը վարակիչ ե այն

Պատ. խմբագիր՝ բժ. Ա. Ղաղարյան  
Տեխ. խմբագիր՝ Գ. Զենյան  
Սրբագրէ՛ Կար Հակոբյան

Քլավիս № 8470, Հրատ. № 2901, պատ. № 438, ակրաժ 3000  
Հանձնված և արտադրության 2 մարտի 1934 թ.  
Ստորագրված և տպագրության համար 19 մարտի 1934 թ.

Դեմքատի տպարան—Յեղեան

պատճառով, վոր վարակը մարդուն անցնում ե  
մարդուց, և բծավոր տիֆով հիվանդանում են  
այս դեպքում, յերբ արդեն վարակ կա:

Բծավոր տիֆը հայտնի յե վաղուց: Դեռ  
մեր տարեթվից 400 տարի առաջ, Աթենքում  
բծավոր տիֆի համաճարակ եր առաջացել,  
վորը բազմաթիվ զոհեր եր տարել: Այդ հա-  
մաճարակն ել հենց Աթենքի տիրապետության  
վախճանի պատճառ դարձավ: XVI դարում,  
ինչպես նկարագրում ե խտալացի գիտնական  
ֆրակաստորին, բծավոր տիֆի մեծ համա-  
ճարակ ե բռնկում ֆրանսիական բանակում,  
յերբ վերջինս պաշարել եր Նեապոլ: Ռու-  
սաստանում բծավոր տիֆը, ինչպես և մի շարք  
այլ վարակիչ հիվանդություններ, բռլոր պա-  
տերազմների անբաժան ուղեկիցն են յեղել:

Դեռ 1770 թվին ռուսական բանակը Ռու-  
սինիայից բծավոր տիֆ տարածեց ամբողջ Ք'յոկ  
բռում: Միայն Մոսկվայում որական 900 մարդ  
եր մեռնում: Համաճարակի պատճառով առա-  
ջացած բնդհանուր ահ ու սարսափի որերին  
«ողնության» եյին կանչված «Հրաշաղործ-  
սրբապատելիներն» ու կրոնի սպասավորնե-  
րը, վորոնք ընդհակառակն ել ավելի տարածե-  
ցին վարակը, իսկ իշխանությունը բժիշկների  
գիտությամբ փակել եր բաղնիքները, չհաս-  
կանալով նրանց վերը տիրող համանարակի  
զեմ կամերու գործում:

XIX դարի պատերազմներին միշտ ել ու-  
ղեկցել ե բծավոր տիֆը: Եվեղիայի պատե-

քազմը Դանիայի և Ռուսաստանի հետ (1808-  
1809թ.թ.), Ղրիմի պատերազմը (1854-1856  
թ.թ.), քաղաքացիական պատերազմն Ամերի-  
կայում (1859-1861 թ.թ.), ռուս-տաճկական  
պատերազմը (1877-1878թ.թ.), ռուս-ճապո-  
նական պատերազմը (1904-1905 թ. թ.) և  
վերջապես խմբերալիստական պատերազմը  
(1914-1918 թ.թ.) ակնհայտնի կերպով յեկան  
ապացուցելու, վոր բծավոր տիֆը պատերազմ-  
ների ու պատերազմական զործողությունների  
անխուսափելի ընկերակիցն ե, վոր զորամասե-  
րի տեղափոխության, հսկայական մարդկային  
զանգվածների շարժման, ազգաբնակության  
աղքատացման ու քայլքայման Փոնի վրա բը-  
ծավոր տիֆը տարածվում ե զանազան յերկիր  
ներում, հետզհետե զարգանալով և անցնելով  
մի տեղից մյուսը և զունչացնելով ահապին  
թվով մարդիկ: Դժբախտաբար հնարավորու-  
թյունն չկա այստեղ նշել, թե վորպիսի թիվ ե  
կազմում բծավոր տիֆի պատճառած մարդկա-  
յին կորուսոր հիշյալ պատերազմների ընթաց-  
ում: Բայց ստորև բերված մի քանի թվերն  
ու, վոր վերաբերվում են բծավոր տիֆի զո-  
ւությին, միանգամայն բավական են, վորպեսզի  
մենք պատկերացնենք այն սարսափիներն ու  
աղեաները, վորոնք տեղի յեն ունեցել պա-  
տերազմների ժամանակ բծավոր տիֆի պատ-  
ճառով: 1877-1878 թ. թ. ռուս-տաճկական  
պատերազմի ժամանակ բծավոր տիֆի համա-  
ճարակը մեծագույն չափերի հասավ, և վոր

բնորոշ և մեղ հետաքրքրող տեսակետից, բժագոր տիֆի տարած զոհերի թիվը ավելի յեղափ, քան գնդակներից անմիջականորեն զոհվածների թիվը:

Բժավոր տիֆը ոռուս-տաճկանկան պատերազմի ժամանակ	Բ Ա Յ Ս Ր Ջ Ա Կ Թ Վ Ե Բ	
	Դանուբյան բանակ հրանդաւ- ցել են	Կովկասյան բանակ հրանդաւ- ցել են
	32451	10081
	15560	6506

Իսկ իմպերիալիստական պատերազմի ժամանակ բժավոր տիֆի համաձարակն այնպէսի ահառելի չափեր ընդունեց, վոր կարելի յետևել, թե բժավոր տիֆի հրդեհ բռնկեց բովանդակ յերկրում: Բժավոր տիֆով հիվանդացածների թիվը ցարական բանակում դժվարապես ավելի չատ եր, քան արևմտյան ըանակներում: Ցարական բանակի առկա կազմի յուրաքանչյուր 1000 մարդուց բժավոր տիֆով հիվանդացել ե:

1912 թ. — 0,13                  1915 թ. — 2,33  
1913 թ. — 0,13                  1916 թ. — 1,68

Բժավոր տիֆը XX դարի սկզբներում նըկատվել է նմանապես մի շարք ուրիշ յերկրներում՝ Անդիխյում, Իսպանիայում, Իտալիայում, Բալկանյան պետություններում, Խոխայում, Աֆրիկայում, Հյուսիսային Ամերիկայում, Լեհաստանում և այլն:

Համաձայն աղգությունների լիգայի հիգիենական սեկցիայի տվյալների՝ բժավոր տիֆը շարունակում է նկատվել (ներառյալ 1933 թ. վերջը) Աֆրիկայում (Ալժիր, Յեգիպտոս), Ամերիկայում (գլխավորապես Չիլում), Յեհաստան և այլն):

Իմպերիալիստական պատերազմի ընորհիվ, վոր ուղարմածակատ գուրս բերեց միլիոնավոր զանգվածներ և զրանով իսկ ահագին թվով մարդկանց տեղափոխություն առաջացրեց, միայն Ռուսաստանում ըստ վիճակագրական տվյալների, հիվանդացավ բնակչության մոտ  $\frac{1}{8}$  մասը: Զորամասերը և ուղմագերիները, զորացրվածները Փրոն տից վերադառնալով՝ իրենց հետ բժավոր տիֆ ելին բերում և տարածում Ռուսաստանի ամենահեռավոր անկյունները: Այդ ժամանակ հիվանդացածների ընդհանուր թվից (շուրջ 25 միլիոն) գրեթե յերկու միլիոնը մահացավ: Բժավոր տիֆի պատմությանն անծանոթ են նման մեծ ու սարսափելի թվեր:

Հայաստանի պայմաններում բժավոր տիֆի տարածման գործում խոչը գեր կատարեց գաղթականությունը, վորը հարկադրաբար շարունակ մի տեղից մի այլ տեղ անցնելով՝ քաղցից ու ցրտից անպաշտպան, ամեն ինչից զրկված, վոջլոտ ու հաճախ մի կտոր հացի կարստ, հետևաբար քիչ թե չատ նորմայ կյանքի պայմաններից զուրկ՝ կոտորվում եր

բծավոր տիֆի ճիրաններում և միաժամանակ ինքը շրջապատող մարդկանց վարակման աղբյուր հանդիսանում:

Արիվ վիճակագրական տվյալներ չունենալու պատճառով (ինչպես հայտնի յէ գաշնակների ժամանակ սանիտարական վիճակաղըությունը, վորակես այլպիսին բացակայում եր) բերում ենք մի քանի թվեր թժ. Ա.Մելիքյանի զեկուցումից (Յերևան, բժշկական ընկերություն, 1922 թ.): Առ 1-ն հունվարի 1919 թ. Յերևանի հիվանդանոցներում յեղել ե բծավոր տիֆով հիվանդ 306 մարդ: Բացի դրանից, 1919 թ. ընթացքում Յերևանի հիվանդանոցներում յեղել ե 2410 հիվանդ, տներում 1096 հիվանդ, ընդամենը, ըստ նշված տվյալների, 1919 թվին ցուցակադրյալած են յեղել միմիայն Յերևան քաղաքում 3812 բծավոր տիֆով հիվանդներ: Այդքան հիվանդ յեղել ե մեկ տարվա ընթացքում մեկ քաղաքում ցուցակագրը՝ վաճառված: Իսկ յեթե մենք նկատի ունենանք այն համաձանքը, վոր շատ հիվանդներ սանիտարական հաշվառումից դուրս են մնացել (շրջնորհիվ բժշկա-սանիտարական նվազագույն ցանցի և այն, վոր բացի Յերևանից, բծավոր տիֆը նկատվել ե Հայաստանի մյուս վայրերում, պետք է ասել, վոր յեղել ե հոկայական համաձարակ: Յեթե մենք հիշենք, վոր Ռուսաստանը իմպերիալիստական պատերազմին մասնակից գարձավ այն ժամանակ, յերբ այդպատերազմի նախորյակին Ռուսաստանում բծա-

վոր տիֆն արդեն մեծ չափեր եր ընդունել, իսկ այնուհետև պատերազմն սկսվելուց հետո համաձարակն սկսեց արագորեն տարածվել, առաջին հերթին զորամասերում, ապա պետք ե բասկանալի լինի, վոր քաղաքացիական կորիվների շրջանում, իմպերիալիստական պատերազմի հետևանքով (Յերևան, բժշկական ընկերություն, 1922 թ.): Առ 1-ն հունվարի 1919 թ. Յերևանի հիվանդանոցներում յեղել ե բծավոր տիֆը պետք ե ել ավելի մեծ չափեր ընդուներ, իսկ տիրող սովոր, բլոկադայի և ինտերվենցիայի ընորհիվ, այդ համաձարակը պետք ե վոր, իրոք, ահավոր բնույթ ստանար: Շնորհիվ բծավոր տիֆի համաձարակի հենց այդ ահուելի չափերի՝ հեղափոխությունը վտանգի մեջ եր: Անհրաժեշտ եր լարել բոլոր ուժերը՝ բծավոր տիֆի հրդեհը հանգունելու համար, մի հրդեհ, վոր քաղաքացիական պատերազմի նման պատմական լուրջ մոմենտում քայլայում եր յերկիրը: Ընկ. Լենինը, տեսնելով, թե ինչպես տառապում ե բովանդակ խորհրդային յերկիրը շնորհիվ բծավոր տիֆի համաձարակի, վորը ծանր ժառանգություն եր մնացել ցարիզմից, ժողովրդական կոմիսարների խորհրդի նիստերից մեկում բծավոր տիֆի դեմ մղվող պայքարը հայտարարում ե հերթական և հարվածային մի խընդիր: Ահա թե ի՞նչ է ասել Լենինը բծավոր տիֆի մասին. «Մեր դեմ ե արշավում մի նոր, մի յերրորդ աղետ. դա վոջիլն ե, բծավոր տիֆը, վոր հնձում ե մեր զորքերին: Այսուղ, ընկերներ, անհնարին ե պատերազմներ այն սարսափ

ները, վոր տեղի ունեն բծավոր տիֆով բըռն-ված վայրերում, յերբ բնակչությունն ուժաս-պառ է, թուլացած, յերբ նա զուրկ է նյութա-կան միջոցներից, — ամեն կյանք, ամեն հա-սարակայնություն մեռնում է: Այստեղ արդեն մենք ասում ենք. կամ վոշիլը կհաղթի սոցիա-լիզմին, կամ սոցիալիզմը պետք է հաղթի մոշի ներին» (Լենին, յերկերի ժողով. Հ. XVI, էջ 421-422):

Բծավոր տիֆի լիկվիդացիայի խնդիրն այն ժամանակ դրվում եր, վորպես խորհրդային յերկրի պատապանունակությունը բարձրաց-նելու միջոցներից մեկը, մի խնդիր, մի մի-ջոց, վորն առաջին հերթին ապահովելու յեր սոցալիզմի կառուցումն մեր յերկրում, վորն ապահովելու յեր սոցիալիզմ կառուցող բնակ-չության առողջապահությունը:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր բծավոր տիֆը պատերազմների ուղեկից ե, ուստի և այդ տիֆը նաև պատերազմական տիֆ է կոչ-վում: Անջնջելի կերպով մեր բոլորիս գիտակ-ցության մեջ տպավորվել են այն ժամանակ-վա բծավոր տիֆի բոլոր սարսափները. անջն-ջելի կերպով տպավորվել են մեր գիտակցու-թյան մեջ համաձարակային ֆրոնտում աշխա-տողների հերոսական ջանքերը, վորոնք ժամա-նակին տվին իրենց բեղմնավոր արդյունքը:

Բացի պատերազմներից, բծավոր տիֆի տարածման գործում խոչոր դեր են կատարել սովոր անբերիությունը: Բոլորին հայտնի

յե, վոր քաղցի չնորհիվ որդանիզմի դիմագրա-կանությունն ընկնում է, և որդանիզմն ավելի յենթակա յե լինում զանազան վարակիչ հիվան դությունների, և դրանց թվում առաջին հեր-թին՝ բծավոր տիֆին: Այդպիսի պայմաններում ժարդիկ ավելի հեշտ են վարակվում: Անբերի-ությունը միաժամանակ ստիպում է մարդ-կանց հաց, սնունդ ճարել իրենց համար, ստիպում է մի տեղից մի այլ տեղ անցնել հօկա յական զանգվածներով և այդպիսով բծավոր տիֆ տարածել գյուղում, քաղաքներում և կա-յարաններում: Վորպեսզի միանգամյան պարզ լինի, թե ինչ ազդեցություն ունեն սովոր անբերիությունը բծավոր տիֆի տարածման վրա, սովոր բերում ենք մի որինակ, վորը վե-րաբերում և Ռուսաստանի 1890-1913 թ. ժա-մանակաշրջանին:

Բծավոր տիֆը յեզ սովոր (անբերիությունը)

Տարիք	Հացիք քանակը ֆը-թերոր մեկ շնչի համար	Խուսասա. բծավոր տիֆ գ հրանգացել են(յուրաք 1000 հոգ)
1890	23,69	5,3
1891	17,22	6,3
1892	21,01	16,5
1900	23,44	3,9
1901	19,15	3,9
1902	27,35	4,3
1904	22,93	3,8
1905	14,18	5,3
1906	15,66	3,6
1907	17,45	3,5
1908	17,89	6,8
1910	21,78	8,8
1911	16,18	7,5
1912	22,2	6,2
1913	23,34	7,2

Այս աղյուսակից պարզ յերեվում է, թե ինչպես բծավոր տիֆով հիվանդանալու դեպքերը հացի անբերրիությունից հետո ամեն անգամ ավելանում են:

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր բծավոր տիֆը նաև սովոր (անբերրիության) ուղեկիցն է: Ուստի և բծավոր տիֆը նմանապես սովոր տիֆ և կոչվում:

Բժիշկների և շատ ուրիշների դիտողությունները ցույց են տվել, վոր բծավոր տիֆն առաջանում է այն վայրերում, վորտեղ մարդկանց կուտակում են նկատվում և այդ գլխավորապես նկատելի յե կալանավայրերում, վորտեղ անցյալում առանձնապես աչքի յեր ընկնում մարդկանց կուտակվածություն և դրա հետ կապված առատ զոջոտությունը: Կրկնում ենք, վոր այդպիսի դրություն մանավանդ գոյաւթյուն ուներ հին բանտերում: Ժամանակին բանտերում տեղի ունեցած բծավոր տիֆի համարակների շատ դեպքեր են նկարագրված: Միայն 1901թ. Ռուսական բանտերում բծավոր տիֆից մահացել է 1472 մարդ: Միայն 1909թ. գարնանը Ռուսաստանի բանտերում բծավոր տիֆի 3000 դեպք ե արձանագրված: Այդպիսի որինակներ կարելի յե շատ բերել: Բծավոր տիֆի տարածմանը նմանապես մեծ չափով նպաստել են առաքման կայանները, հտապները և այլն: Այսպիսով մենք տեսնում ենք, վոր բծավոր տիֆը հեշտությամբ կարող ե բուն դնել կալանավայրերում և վարուկման հնոց

դառնուլ ըրջապատի բնակչության համար: Հետեւվարար բծավոր տիֆը բանտերի ուղեկիցն է յեղել, ուստի և մենք կարող ենք նրան նաև բանտային աղյուսը տալ:

Այսուհետև, բծավոր տիֆի վերաբերյալ գիտությունը սովորեցնում է մեզ այն, վոր այդ հիվանդությունը հեշտությամբ կարող ե առաջանալ և տարածվել հակասանիտարական պայմաններում գտնվող հանրակացարաններում և բնակելի բարակներում, վորտեղ վոջլուտություն ե նկատվում, բուժական հաստատություններում, հակասողջապահական պայմաններում գտնվող իջևաններում, գիշերային ապաստարաններում և այլ վայրերում, վորտեղ մարդկանց կուտակում ե լինում և վորտեղ վոջլուտություն ե նկատվում: Ահա և այդ բոլոր տեղերն ու հաստատություններն այն հողն են հանդիսանում, վորտեղ բծավոր տիֆը փարթամորեն ծլում, աճում ու զարգանում ե: Այդ բոլոր տեղերումն ել բծավոր տիֆը առաջանում ու տարածվում ե չնորհիվ վոջլուտության: Այսուեղ, վորտեղ վոջիներ չկան, այնտեղ ել բծավոր տիֆ չի կարող լինել: Վոչնչացնելով վոջիներին՝ մարդու համար այնքան վասանգավոր պարզիտներին՝ մենք դրանով ել հենց հանգցնում ենք բծավոր տիֆի հրդեհը: Նո, ում կծել ե բծավոր տիֆով վարակված վոջիլը, բծավոր տիֆով հիվանդ մարդու վոջիր, սովորաբար հիվանդանում և բծավոր տիֆով: Այսպիսով մենք տեսնում ենք, վոր

բծավոր տիֆի տարածումը ամբողջապես  
փոխվում է պարագիտներից, այն և, վողլից.  
ուստի և բծավոր տիֆը կրում է նաև պարա-  
գիտար տիֆ կամ վողլի տիֆ անունը:

Թե վորքան ծանր է անցնում բծավոր  
տիֆը, այդ հայտնի յե շատերին: Զուր չի,  
վոր շատերը վախենում են և այս կամ այն  
կերպ խուսափում են բծավոր տիֆի վարակից:  
Յեթե մենք վերելում վողիլներին մեղադրում  
ենինք բծավոր տիֆ տարածելու համար (իսկ  
այդպիսի մեղադրանք մենք միանդամ յան  
արդարացի կերպով ենք բարդել վողիլների  
վրա), ապա և այն դեպքում, յերբ մեկին  
կծում է բծավոր տիֆով վարակված վողլու,  
նա պետք է բծավոր տիֆ սպասի իր՝ մոտ:


Վողիլը կծելուց հետո պամիջապես բծավոր  
տիֆ չի առաջանում, այլ պետք է վորոշ ժամա-  
նակ անցնի. սովորաբար 12-14 որ կծելուց  
հետո (յերեմն մի քանի որ ավելի կամ պտ-  
կաս այդ ժամանակամիջոցից) յե հիվանդու-  
թյունն արտահայտվում: Այնպես, վոր ստաց-  
վում է հիվանդության յուրատեսակ թագուն  
մի ժամանակաշրջան, յերբ վարակը մտնելով  
որդանիզմի մեջ, վորոշ ժամանակամիջոցում  
հասունանում է և ապա տալիս բծավոր տիֆ  
հիվանդության խական պատկերը: Հիվան-  
դության այդ թագուն շրջանը (այլ կերպ՝ այդ  
շրջանն ինկուբացիոն շրջան է կոչվում) սովո-  
րաբար վոչ մի բանով ինքն ցույց չի  
տալիս, և միայն այդ ժամանակաշրջանն անց-

նելուց հետո, հիվանդությունն սկսվում է  
միանդամից: Հաճախ լինում են դեղքեր, յերբ  
ժարդիկ աշխատանքից տուն վերադառնալով,  
կամ վորեն տեղում շփվելով վողլու մարդ-  
կանց հետ և տուն գալով՝ 12-14 որից հետո  
հիվանդանում են բծավոր տիֆով: Սկզբում  
նա մրսում, դողում է. հետո դիսացավ և  
սկսվում:

Նրա մարմնի ջերմաստիճանը սովո-  
րաբար միանդամից բարձրանում ու հաս-  
նում է մինչև 39,40 և ե'լ ավելի աստի-  
ճանի և այդպես բարձր, վորոշ աննշան տա-  
տանումներով միայն մնում է 14որ: Սակայ-  
դեպքերում ջերմությունը հիշալ աստիճանի  
վրա մնում 14 որից քիչ ավելի կտմ պակաս:  
Հիվանդությունն սկսվելուց 4-5 որ հետո  
հիվանդի մարմնի վրա, մասնավորապես կըրծ  
քի, ձեռքերի, վոտքերի և նույնիսկ զեմքի  
վրա բծեր են յերեվում կամ ինչպես ասում են  
մարմինը «զուրս և տալիս»: Այդ բծերը մանր  
են, մոտավորապես գնդասեղի դլիմիկի մե-  
ծության՝ և՛ կարմրագույն, և՛ միաժամանակ  
մաշկի մակերեսից քիչ բարձր: Յեթե այդ  
բծերը դուրս են յեկել, ապա դրանք, տեսա-  
նելի յեն հասարակ աչքով:

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր բծա-  
վոր տիֆի ժամանակ մարմնի վրա բծեր են  
տուաջանում. ուստի և այդ տիֆը բծավոր  
տիֆ և կոչվում: Հիվանդության ժամանակ

ԴԱԿԱԳԱՎԵՐԸ սաստկանում են, հիվանդը զառանցում է, գիտակցությունը կորցնում, անկողնից զուրս և թուչում և այլն:



Նկ. 1. Զերծուահաններ կորպությունը բժամանակի ժամանակի:

Սովորաբար հիվանդությունն սկսվելուց 14 որ հետո ջերմաստիճանը միանգամից իջնում է և հասնում 36 աստիճանի, 35 աստիճանի: Պարզ է, վոր յեթե մի որ առաջ հիվանդի ջերմաստիճանը բարձր էր, այն է՝ 40 աստիճան և ավելի, յեթե դրանից հետո ջերմաստիճանը միանգամից իջել ու հասել է 36 աստիճանի, կամ 35ի, ապա այդպիսի խիստ տատանումը բացասարար և անդրադառնում սրտի վրա, իսկ յերբեմն մահ է պատճառում այդ կրիտիկական մամենտին: Այդպիսով, ինչպես ասում են, վրա յեցասնում հիվանդության կրիզիսը (ճզնաժամը) : Մերեւը, թույլ սիրո ունեցողները, ալկուլիզմերը, վորոնք իրենց սիրտը մաշել, քայլայի են վոգելից խմիչքներ գործածելով, սովորաբար դժվարությամբ են դիմանում բժավոր տիֆին. ուստի և այդ տարրերի մեջ բժավոր տիֆի առաջացրած մահացությունը բավական մեծ և լինում: Իսկ յեթե հիվանդը չի մահանում, ապա նա միջին հաշվով կորցնում է 2 ամիս (յեթե բարդություններ չեն լինում, վորոնք յերբեմն հիվանդին բավական յերկար ժամանակ չարքից դուրս են բերում): Ուրեմն բժավոր տիֆով հիվանդացածը յերկու ամիս չարունակ կարված է լինում արտադրությունից, իր առորյա աշխատանքից: Այսուղից արդեն պարզ է, թե վորչափ բժավոր տիֆը խանգարում եր մեզ քաղաքացիական պատերազմի ժամանակ, թե վորքան բացառաբար եր անդրադառնում նա

մեր աշխատանքների վրա խորհրդային իշխանության առաջին տարիներում:

Հենց այդ ժամանակ չնորհիվ ձեռք առնված միջոցների, չնորհիվ գործ դրված հերոսական ջանքերի, Խորհրդային իշխանության առաջին տարիներում հաջողվեց հաղթահարել բծավոր տիֆի համաճարակը և հիմնականում լուծել Խորհրդային յերկրի համաճարակային դրության խնդիրը: Այնուհետեւ համաճարակը վորպես այդպիսին այլևս յերեվան չի գալիս, և միայն հիմնադության յեզակի դեպքեր են նկատվում, դեպքեր, վորոնք ցարիզմի թողած ախուր ժառանգության՝ վողլոտության արգունք ելին: Ահա և այդ վողլոտության չնորհիվ մինչ այժմ ել բծավոր տիֆով հիվանդանալու առանձին դեպքեր ենք նկատում:

Անհրաժեշտ ենք համարում այսուղ մի քանի, թեկուզ կցկառը, տեղեկություններ տալ բծավոր տիֆի համաճարակի մասին Հայաստանի վերաբերմամբ, վորտեղգանակցության տիրապետության որոք քայլքայումը, սովոր, աղքատությունը, գաղթականությունը և ազգամիջյան կոփիները համատարած յերեվույթներ ելին և վորտեղ բծավոր տիֆն ել իր բաժին գոհերը տարալ Հայաստանի բնակչությունից:


Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատվելուց և բծավոր տիֆի համաճարակի դեմ կազմակերպված պայքար ծավաելու հետեւանքով, բծավոր տիֆը զգալիորեն պակասեց և միայն յերնեմն եր յերեան գալիս

այն վայրերում, վորտեղ վողլոտություն կար: Միանգամից վերացնել վողլոտությունը, Հայաստանի անցյալ պայմաններում այդ անխուսափելի յերեվույթն իհարկե հնարավոր չեր: Վողլոտության վերացման խնդիրը Հայաստանի խորհրդայնացման առաջին տարիներում անտարսկույս կապված եր մի շարք դժվարությունների հետ. դա կատ ուներ յերկրի եկոնոմիկայի, ազգաբնակչության կուլտուրական մակարդակի հետ. դրա համար անհրաժեշտ եր նաև տառզապահության Փրոնտում աշխատավորների համապատասխան կադրեր ունենալ: Աւատի և տեղատեղ դեռ նկատվող վողլոտությունը բծավոր տիֆի յեզակի դեպքեր եր առաջացնում: Այնպես վոր բծավոր տիֆը մեղանում դեռ բոլորովին վերջացած համարել չի կարէի, բայց նա աստիճանաբար մարում ե, այժմ միայն նրա թույլ կայծերն են յերեվում: Անցյալ հազարավոր և տասնյակ հազարավոր դեպքերը ներկայումս տեղի յեն տվել միայն տասնյակ դեպքերի: Այդ մասին վկայում են հետեւյալ թվերը.

(Այսուսաւ տաս 26-րդ հիւնվ)

Բայց հենց այդ յեզակի դեպքերն ել պետք եւ վերջանան: Բծավոր տիֆը պետք եւ իսպառ վերացվի մեր միջից: Նա բնավ չպետք ել լինի անդասակարգ սոցիալիստական հասարակության մեջ: Պետք եւ վերացվին այն պայմանները, վորոնք բծավոր տիֆ են առաջացնում: Հետեւ պետք ու, պետք եւ վերացվի վողլոտությունը:

Մենք արդեն ծանոթացանք այդ հիվանդությանը, իմացանք թե ինչպիսի աղետ ե հանգիստանում նա: Միջին հաշվով բժավոր տիֆուզ հիվանդացողների  $10^{\circ}$ -ը մեռնում է, այսինքն՝



Նկ. 2 Բժավոր տիֆի շարժումը 1919 թվին և 1924 թվից մինչև 1932 թիվը:

ՄԱՆՈՒԹՅԻԹՑՈՒՆ—1919 թ. 3813 դեպք ցուցակագրված ե յեղել միմիայն Յեղևան քաղաքում:  
1924—1932 թ. ցուցակադրված դեպքերի թիվը վերաբերում է առողջ հանրապետությանը:

10 բժավոր տիֆի հիվանդներից մեկը մահանում է: Այնուհետև, վիճակադրական տվյալները ցույց են տալիս, վոր բժավոր տիֆու-

մարդիկ հիվանդանում են առաջնալավես աշխատունակ հասակում: Դա միանդամայն հասկանալի կլինի, յեթե մենք հիշենք, վոր բժավոր տիֆն առաջանում ե վոնցի շնորհիվ: Այն մարդիկ, վորոնք ավելի հաճախ են չփում ուրիշների հետ, վորոնք հաճախ յերկաթուղով ճանապարհ են գնում, նրանք ել պետք ե շատ հիվանդանան: Այդ նշանակում ե, վոր բժավոր տիֆը վատանդավոր ե մեզ համար նաև այն բանով, վոր նա ամենից առաջ հարգվածում ե աշխատունակներին: Բժավոր տիֆը պատկանում ե այն հիվանդությունների թվին, վորոնք սովորաբար չեն կրկնվում, այսինքն՝ բժավոր տիֆն այնպիսի մի հիվանդություն ե, վորով մեկ անգամ հիվանդացած մարդը սովորաբար այլևս յերբեք չի հիվանդանում նույն այդ հիվանդությամբ: Ուրիշ խոսքով՝ բժավոր տիֆով հիվանդացովն անվարակելիութուն (իմունիտետ) ե ձեռք բերում այդ հիվանդության գերաբերմամբ և սովորաբար յերկրորդ անգամ չի հիվանդանում:

Յերեխանները նմանապես հիվանդանում են բժավոր տիֆով: Բայց նրանք հեշտությամբ են տանում այդ տիֆը և սովորաբար դրանից չեն մահանում: Սովորաբար, 300-500-1000 հիվանդ յերեխաններից մեկն ե մեռնում բժավոր տիֆից:


Վիճակագրական տվյալներն այնուհետև ցույց են տալիս, վոր տղամարդիկ ավելի չատեն հիվանդանում բժավոր տիֆով, քան կտ-

նայք: Այդ ևս հասկանալի յե, վորովհետմ  
տղամարդիկ ավելի հաճախ են լինում շրջադա  
յության մեջ, ավելի մեծ շփում ունեն ուրիշ  
ների հետ և, հետեվաբար, ավելի յեն յենթա-  
կա վարակման վտանգին, և նրանց վրա ավելի  
հեշտությամբ են վոզիլներ քաշվում:

Սակայն բծավոր տիֆով հիվանդանում են  
ամեն հասակի (տարբեքի) մարդիկ, և վոչ վոք  
իրեն այդ տեսակետից ապահովված համարել  
չի կարող: Ուստի և մեզանից յուրաքանչյուրը,  
ինչ հասակի ել լինի նա, վորտեղ ել աշխատե-  
լիս և առբելիս լինի պետք ե միշտ հիշի բծա-  
վոր տիֆի վտանգի մասին, պետք ե միշտ հի-  
շի վոզլոտելու վտանգի մասին:

Բայց տարվա մեջ կա վորոշ ժամանակա-  
շրջան, յերբ բծավոր տիֆն առանձնապես մեծ  
չուփ եր ընդունում. ուստի և տարվա այդ ժա-  
մանակ պետք ե առանձնապես զգուշ և աչալուրջ  
լինել: Տարվա այդ շրջանը՝ հունվար, փետր-  
վար ամիսներն են և հետո ել՝ մինչև մայիս:  
Այդ յերեվույթը բացատրվում ե նրանով, վոր  
մարդիկ հավաքված են լինում տներում, ըն-  
տանիքում աճում ե կուտակվածությունը, այ-  
նուհետև ձմեռը մարդիկ ավելի սակավ են լո-  
դանում, սպիտակեղենն նմանատիս ավելի սա-  
կավ և լվացվում: Ահա և այսպիսի պայման-  
ներում վոզլոտությունն աճում է, իսկ դրա հետ  
ել, ինչ վոր արդեն դիտենք, կապված ե բծա-  
վոր տիֆը: Տարվա այդ ժամանակ վտանգավոր  
ե այն, վոր հեռվից յեկած մարդիկ իրենց

հետ վոզիլ, այսինքն՝ և բծավոր տիֆ են բե-  
րում: Յեթե հարց ու փորձ արվի և պարզի:



Նկ. 3. Բծավոր ավի սեզոնային ընթացք

թե յեկողն ում հետ և ճանապարհ յեկել, վոր-  
տեղից և ինչպես և յեկել, պատ պարզ կլինի:  
Են ինչպես և բծավոր տիֆու քոչում մի տեղից  
Տյուսը: Դարնանամուտին բծավոր տիֆու գեռ  
տարածվում եռ դարդանում և միայն մայիսին  
սկսում ե վերջանալ, յերբ մարդիկ սկսում են  
ավելի հաճախ լողանալ, յերբ տաք յեղանակ-  
ների առնչությամբ կուտակվածութումը պա-  
կասում է: Ահա թե ինչով ե բացատրվում բծա-  
վոր տիֆի սեղոնային ընթացքը:

Իսկ ի՞նչպես ե անցնում բծավոր տիֆի վա-  
րակը մեկից մյուսին: Այդ պետք ե իմանան  
մեր աշխատավորության լայն զանգվածները:  
Յեթե մենք անդրադիտությունն ամբողջովին  
վերացնելու հարց ենք դրել, ապա և դրան  
գուդընթաց պետք ե մասսաների մեջ սանիտա-  
րական—հիգիենիկ ունակություններ և դիտե-  
լիքներ տարածել ու ամրացնել: Հարկավոր ե,  
վոր մեզնից յուրաքանչյուրն իմանա, թե ինչ-  
պես պետք ե կույել համաճարակային հիվան-  
դությունների դեմ, տվյալ դեպքում՝ բծավոր  
տիֆի դեմ: Վերելում մենք ասացինք, վոր  
բծավոր տիֆի վարակը մեկից մյուսին անց-  
նում ե վողիլների միջոցով:

Դեռ 1847 թ. կովկասում աշխատող ուսւա-  
զինվորական բժիշկներից մեկի (Պրիբիլ) և  
1876 թ. Ռդեսսայում բժ. Մինիսի դիտողու-  
թյունները ցույց են տվել, վոր բծավոր տիֆի  
վարակը մարդուց մարդուն անցնում և մի-  
ջատների (վողիլների) չնորհիվ: Բայց բժ.

Պրիբիլի և բժ. Մինիսի այդ ձիւտ կիտողու-  
թյունն ել այն ժամանակ վոչ վոք հավի չա-  
ռավ: Միայն Նիկոլյի, Կոնտի և Կոնուցյի փորձ  
նական աշխատանքները կապիկների վրա (Կա-  
պիկներին վարակելով բծավոր տիֆով հիվանդ-  
ների վողիլներով) Թունիսում (1909 թ.) յե-  
րեվան հանեցին այն գերը, վոր խաղում են  
հաղուստի վրա գտնվող վողիլները բծավոր  
տիֆի վարակը տարածելու գործում:

Բացի վողիլների կծելուց, նույն հեղինակ-  
ները ապացուցեցին, վոր նույնիսկ այն գեղ-  
քում, յեթե մարդու մարմնի վրա բծավոր տի-  
ֆով վարակված վողիլ և ջարովում և յեթե  
մաշկի համապատասխան տեղում վորեւել վնաս-  
վածք (քերծվածք, փոքր վերքեր և այլն) կու,  
ապա այդ գեղքում ել բծավոր տիֆ և առաջա-  
նում: Այնուհետև հիշյալ հեղինակներն արել են  
այսպիսի մի փորձ և՝ նրանք վողիլ ստամոքսը  
զատել են մարմնի մյուս մասերից և, եմուլիսա-  
պատրաստելով, սրսկել են կապիկներին: Կա-  
պիկները այս դեպքում ել հիվանդացել են  
բծավոր տիֆով: Այսպիսով՝ Նիկոլյ և  
իր աշխատակիցներն ապացուցել են, վոր  
մարմնի վողիլը (հաղուստի վրա գտնվող)  
տիֆի վարակը տարածող ե և, հետե-  
րօնավոր տիֆի վարակը տարելի յե-  
վարար, բծավոր տիֆով հիվանդից կարելի յե-  
վարակվել միայն նույն հիվանդի վարակված  
վողիլ միջոցով և այն ել գլխավորապես կծելու  
միջոցով, թերեվս լինում են հաև գեպքեր, յերբ  
բծավոր տիֆով վարակվում են և վնասված


մաշկի վրա վարակված վոչիլը ջարդելու միջոցով։ Բնավոր տիֆով հիվանդ մարդու արյունը վարակ ե պարունակում իր մեջ և, հետեւարար, այդ վարակը անդախակման (լոկափաղիայի) ե յենթարկվում հիվանդի արյան մեջ, ուստի բծավոր տիֆով հիվանդի արյունը խիստ վարակիչ ե։

Այսպիսով՝ իմպերիալիստական պատերազմից 5 տարի առաջ հիշյալ գիտնականներն ապացուցեցին և պարզաբանեցին այն, թե ինչպես ե տարածվում բծավոր տիֆը և թե ինչն ե վարակիչ՝ հիվանդի մեջ։ Իմանալով այդ, միանգամայն հնարավոր եր հետագայում բծավոր տիֆի դեմ պայքարելու միջոցներ ձեռնարկել։ Ավելորդ չենք համարում այստեղ հիշտատակել և մի այլ որինակ։ Այդ այն ե, վոր ուսւ պրոֆ. Մոչուտկովսկին դեռ 1876 թ. վերցնելով բծավոր տիֆով հիվանդի արյունը և պատվաստելով իրեն (այսինքն՝ վարակելով իրեն այդ ճանապարհով), 18 որ հետո ինքը հիվանդացել եր բծավոր տիֆով։ Կրկնում ենք, վոր այդ ամենը հայտնի յեր իմպերալիստական պատերազմից շատ առաջ։ Բայց, զժբախտարար, այդ գիտնականների փորձերը ժամանակին նկատի չեն առնվել։ Սկսվեց իմպերալիստական պատերազմը, բռնկեց և տիֆը։ Թե ինչպես ե տարածվում բծավոր տիֆը, այդ արդեն հայտնի յեր գիտությանը։ Բայց չնայած դրան, Գերմանացի բժիշկ՝ Գ.Ռ.-ն, վոր, հիշյալ պատերազմի ժամանակ աշխատում

եր տաճկական բանակում, թյուրքիայում, 1915 թվին, մարդկանց վրա մի շարք փորձեր արավ, վորոնք գրեթե հանցաղործության ելին մոտենում։ Այդ բժիշկը նախապես հայտնի բծավոր տիֆով հիվանդների արյունը սրբակել եր առողջ տաճկի զինվորներին (310 մարդու), վորոնցից 174 մարդ հիվանդացել եր բծավոր տիֆով, իսկ 48 մարդ մահացել։ Հարց ե ծաղում՝ անհրաժե՞շտ եր արդյոք նորից կրկնել այն, վոր արդեն արված և ապացուցված եր արդեն շատ վաղուց։ Յեզի, վերջապես, իրավունք ունե՞նք արդյոք մենք նըման փորձեր կատարել կենդանի մարդկանց վրա։ Ի՞նչ կարիք կար այդ անել, յեթե արդեն հայտնի յեր, վոր բծավոր տիֆով հիվանդ մարդու արյունը վարակիչ ե։

Համաշխարհային պատերազմի ժամանակ զերմանացիներն իրենք գործ ունեցան բծավոր տիֆի համաճարակի հետ իրենց յերկուամ, յերբ այդ համաճարակը գլխավորապես տարածված եր ուղղագերի ուսների, ավստրիացիների և այլոց մեջ։ Ահա և զերմանական բժիշկները՝ դ-ր Յուրդենսի գլխավորությամբ բժիշկները՝ դ-ր Յուրդենսի գլխավորությամբ ուղղում եյին պարզել վողիների զերը բծավոր տիֆի տարածման գործում։ Նրանք ուսումագերիներին բաժանել եյին մի քանի խմբերի և տեղավորել եյին նրանց առանձին զորանոցներում։ Մի զորանոցում տեղավորել եյին վողլուս, բծավոր տիֆով հիվանդ ռազմագերիներին, իսկ նրանց կողքին, ընդհանուր

Համատամածի ( սարե ) վրա նույն զորանոցում  
տեղավորել ելին առողջ գերիներին, բայց  
նույնպես վոջոտ։ Առողջ գերիներն սկսել ելին  
մեկը մյուսի հետեւից հիվանդանալ բժավոր  
տիֆով։ Մի այլ զորանոցում նրանք տեղավոր-  
ութել ելին բժավոր տիֆով հիվանդ, բայց վո-  
ջիլներից մաքրված գերիներին առողջ գերի-  
ների հետ միասին, բայց դարձյալ վոջիլներից  
մաքրված։ Յեկ վորովհետեւ դրանց բոլորի  
վոջիլները նախապես վոչնչացված ելին, ուստի  
և այդ յերկրորդ զորանոցում բժավոր տի-  
ֆի դեպքեր չելին նկատվել։ Յուրգենսը ցան-  
կացել եր պարզել այն հարցը, թե արդյոք վո-  
քիվե դեր չե՞ն կատարում մեղ հետաքրքրող  
տեսակետից նաև կեղտն ու մութ կացարանը։




Կ 4

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր բժա-  
վոր տիֆի վարակն անցնում է ուրիշին և տա-  
րածվում է վոջիլների միջոցով և առաջին հեր  
թին ու գլխավորապես մարմնի (հագուստի)  
վոջիլի միջոցով։ Վորոչ տվյալների համա-  
ձայն, բժավոր տիֆի տարածման գործում  
գեր են խաղում և գլխի մազու մասերում ապ-  
րող վոջիլները (գլխի վոջիլ), թեև այդ գերն  
ել շատ աննշան է համարվում։

Յերբ հաղոսստի (մարմնի) վոջիլը կծում  
է բժավոր տիֆով հիվանդ մարդուն և ծծում  
նրա արյունը, ապա այդ արյունը վարակի  
հետ միասին անցնում է վոջիլի ստամոքսը։  
Ստամոքսում վարակը (մարեները) մնում ու  
բազմանում է։ Վոջիլի կծելուց 2-3 որ անցնե-  
լուց հետո (այդ ժամանակամիջոցում վարակը  
բազմանում է վոջիլի ստամոքսում), յերբ այդ  
վոջիլը կծում է մի այլ առողջ մարդու, նա  
այդ մարդուն վարակում է բժավոր տիֆով։  
Վարակը վոջիլի ստամոքսից անցնում է վոջիլի  
թքագեղձերը, և յերբ վոջիլը կծում է մար-  
դուն, և կծելու ժամանակ մաշկի մեջ քիչ թուք  
է բաց թողնում, փորակնոցի արյունը՝ ծծելիս  
չմակարդկի և անցնի ստամոքսը, ապա  
այդ ժամանակ վոջիլի թքի հետ միասին մաշկի  
մեջ և անցնում և բժավոր տիֆի վարակը։

Վոջիլն արագորեն է բազմանում և կարճ  
ժամանակում նրա թիվը մեծ չափերի յե հա-  
նում։ Շատ կարճ ժամանակում հազարավոր  
վոջիլներ են տառաջանում։ Յերբեմն մարմնի

մաշկը չափազանց առատ վողլուսության դեպքում ծածկվում է մի նոր մաշկով, կազմված հապարավոր վողիներից։ Անցյալ իմպերիա-



ա կ ն 4

Մստական պատերազմի ժամանակ ռազմագերիներից լիարերով վողիլ եյին հալաքում։ Կան տվյալներ, վոր վերջին պատերազմի ժամանակ 120 վիրավոր ռազմագերիներից 15 կիւր (մոտավորապես մի փութ) վողիլ եր հալաքիլ։ Շատ վողլուտ զորանոցներում անցյալում յեղել են դեպքեր, —և յես ինքու ականատես եմ յեղել այդպիսի դեպքերի, — յերբ զորանոցները ըրջելիս վոտքի տակ սպանվող վողիներից ճթճըթոց ե լսվում։ Ով չի տե-

սել այդպիսի բան, ոժվարությամբ կհավատան։ Բայց դա փաստ է։

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր վողիլը մեր ահեղ և վտանգավոր թնշամին ե։ Նրա դեմ պետք է կովել։ Այդ անհրաժեշտ է, վորովհետև այլ կերպ անհնարին է պայքարել բծավոր տիֆի դեմ։ Բայց վորպեսզի կարողանանք կովել այդ թշնամու, այսինքն վողիլի դեմ, պետք է ծանաչել նրան, պետք է ծանոթանալ նրա կյանքին։

Վողիները տիպիկ պարագիտ միջատներ են և պատկանում են Հողավորների դասին։

Վողիներից մեզ հետաքրքրում են գլխի, հագուստի (շորի) և այլքի վողիները։ Նոքարազմանում են չափազանց արագ։

Բնագետ Լեվենդուկն իր հայտնի գուրապույի մեջ, 2 եռ վողիներից, 2 ամսվա ընթացքում, աճեցրել եր 18 հազար վողիլ, իսկ ըստ պրոֆ. Պալլովսկու, մի վողիլից, նրա ամբողջ կյանքի ընթացքում, ստացվում է 4160 հատ։ Մարդու գլխի մազերում կամ նրա շորերի մեջ, չատ կարծ ժամանակամիջոցում, կարող է առաջ գալ վողիների այնպիսի մեծ քանակություն, վոր սովորական միջոցներով նրանցից ազատվելու վոչ մի հնարավորություն չի լինում։ Վողիները իրենց ամբողջ կյանքն անց են կացնում մարդու վրա։ Դա նըրանց մշտական բնակավայրն է։ Այսինչ, փայտոցիներն ու լվերը, սովորաբար, մար-

դու վրա չեն ապրում, այլ այցելում են նրանք  
միայն սնունդ ստանալու նպատակով:

Վողիների աճեցումը կատարվում է կեն-  
սաբանական թերատ կերպարանափոխու-  
թյամբ. եզր դնում է ձվիկներ (անիծներ), վո-  
րոնցից դուրս ե գալիս վորդ: Վորդն ել առանց  
հարսնյակ գառնալու կերպարանափոխում և  
սնուահասուն վողի: Միջին հաշվով՝ վողի-  
ներն ապրում են 30-ից մինչև 50 որ: Վողի-  
ների (գլխի) և հագուստի (չորի) շարժման  
մաքսիմումը, մեր դիտողությունների համա-  
ձայն, 1-2 ըսպեյում, համում է մինչև 25-40  
ոմ., իսկ պրոֆ. Պավլովներու տվյալների հա-  
մաձայն՝ Յօ ոմ մեկ ըսպեյում: Բոլոր վողի-  
ներն ել, ինչպես արյունուռշտներ, սնվում  
են արյունով, վորի համար գործ են դնում  
իրենց, այսպես կոչված, խայթոցը (բերանի  
մասերը, վորով ծակում են մաշկը): Նկատի  
առնելով, վոր վողի խայթոցը միացած է թուք  
արտադրող գեղձերի հետ, դրանով կարելի յե-  
րացատրել այն փաստը, վոր արյուն ծծելու  
դորձողության միջոցին, արյունը խառնվում  
է թթի հետ, իսկ թուքն այն հատկությունն  
ունի, վոր չի թողնում արյունը մակարդվե-  
րու: Յուրաքանչյուր մի վողի որվա ընթաց-  
քում կծում է մարդուն, միջին հաշվով, 2 ան-  
դամ: Վողիլը, համաձայն կատարած դիտո-  
ղությունների, մի անգամից ծծում է 0,004-ից  
մինչև 0,0008 գրամ արյուն: Վողիլը, յերբ  
կուշտ է, լույսից խուսափում է (բացասական

վերաբերմունք դեպի լույսը): Զրի մեջ վողի-  
լը կարող է մնալ կենդանի 24 ժամ: Պետք է  
յենթաղբել, վոր վողիները զուրկ չեն հոտա-  
ռությունից. նրանց վերաբերմունքը դեպի վո-  
րոշ քիմիական հոտավետ նյութերը բացասա-  
կան ե, ինչպես որինակ, դեպի նաֆտալինը,  
նաֆտոլիդը: Դիմի վողիլը, բեղմնավորու-  
մից 10-20 որից հետո, որական միջին հաշվով  
դնում է 4-5 անիծ, իսկ հագուստի վողիլը՝  
5-12:

Գլխի ու հագուստի վողիների անիծնե-  
րից (ձվիկներից) դուրս են գալիս վորդեր, վո-  
րոնք իրենց ձևով չափազանց նման են վողին,  
բայց դեռ սեռականնորեն հասունացած չեն:  
Վորդերն ել սնվում են արյունով (ծծում են):  
12-18 որից հետո, վորդը Յ կաշեթափում է յ  
հետո, դառնում է սեռահասուն վողիլ: Վողիլը  
սովոր միակում կարող է մնալ մի քանի որ,  
յէթե տաք տեղ է լինում. առանց սնվելու  
վողիլը տաք պայմաններում ապրում է ավելի  
քիչ ժամանակ, քան թե յեթե վողիլը առանց  
մննի (արյան) մնում է ցուրտ պայմաննե-  
րում: Հայտնի յե, վոր ցուրտ պայմաննե-  
րում, նորյնիսկ 0°-ից ցած, 10-12 աստիճան  
նին, վողիլը չի սատկում, միայն փայտանում  
է և տաք տեղ ընկնելով նորից ապրում է:


Հետաքրքրական ե և պետք է հիշել այն,  
վոր բծավոր տիֆով հիվանդի մարմնի վրա վո-  
ղիներն իրենց բավ չեն զգում բարձր ջերմ-  
աստիճանը 39°-40°-է: Այդ վողիլը հեռանում

Ե իր տիրոջից և նոր մարդ ե վորոնում։ Վո-  
ջիլներն իրենց լավ չեն զգում բարձր ջեր-  
մաստիճանն ունեցող հիվանդ մարդկանց վրա  
և, հեռանալով այդպիսի մարդկանցից՝ նրանք  
վարակն իրենց հետ են տանում և վարակում  
ուրիշներին։ Հետևաբար պետք ե շատ զգուշ  
լինել վողլոտ հիվանդներից, յեթե նրանք հի-  
վանդ են բծավոր տիֆով։ Այնուհետև հայտ-  
նի յե, վոր դիակի վրա նմանապես վոջիլ չի  
մնում (սառն ե դիակը)։ Նրան արյուն ե հար-  
կավոր սննդի-համար, և, բացի դրանից, դիա-  
կի ջերմաստիճանն անհամապատասխան ե  
վոջիլների կյանքի համար։ Հեռանալով բծա-  
վոր տիֆից մահացածի դիակի վրայից՝ վո-  
ջիլը նոր տեղ ե վորոնում և, գտնելով այդ-  
պիսին՝ վարակում ե նրան։

Իսկ ինչպէս պետք ե վոչնչացնենք բծավոր  
տիֆը։ Վորպեսզի վոչնչացնենք բծավոր տի-  
ֆը, պետք ե վերացնենք վոջլոտությունը։ Յեվ  
բնակ չպետք ե սպասել բծավոր տիֆի յերեա-  
լուն և հետո միայն զբաղվել վոջիլների վոչն-  
չացման դործով։ Անհրաժեշտ ե այժմ ևեթ, յերբ  
դեռ մեզանում բծավոր տիֆի համաձարակ  
չկա, մի շարք կանխիչ միջոցառումներ կիրա-  
ռել և, առաջին հերթին, ձեռնարկել վոջիլնե-  
րի վոչնչացման դործին, պետք ե ստեղծել այն  
պիսի պայմաններ, վորոնք ապահովում են  
վոջլոտության առաջանալու հնարավորու-  
թյան վերացումը։

Վոջլոտության դեմ պայքարելու դործում  
մեր ակտուալ խնդիրներից մեկը բաղնիքներ

կառուցելն է։ Քաղխորհուրդներն ու շքջործ-  
կոմները տեղական սանիտարական կազմա-  
կերպության հետ միասին պետք ե ամեն կերպ  
ջանան ավելացնելու բաղնիքների թիվը։ Հա-  
ճախ մեզանում կառուցվում են այնպիսի բաղ-  
նիքներ, վորոնք չեն բավարարում ամենատար-  
րական սանիտարական պահանջներին։ Վոր-  
պեսզի մենք կարողանանք համաձարակի ժա-  
մանակ ուղղիոնալ կերպով ողտագործել բաղ-  
նիքները, անհրաժեշտ ե, վոր նրանք ի միջի  
այլոց բավարարեն նաև մի պահանջ։ այդ այն  
ե, վոր բաղնիքներն անցիկ (պահանջ) տիպի  
լինեն և ախտահանիչ կամերաներ ունենան ի-



Նկ. 5 Բաղնիք

բնեց կից։ այդպիսի բաղնիքում լողացողը  
հանվում է մի սենյակում, իսկ լողանալուց  
հետո հաղնվում ե ուրիշ սենյակում։ Լողանա-  
լու ժամանակ լողացողի հագուստը հանվե-  
լու սենյակից հանձնվում է դեղինֆեկցիոն կա-  
մերա, վորտեղից ախտահանման յենթարկված

մաքուր հագուստը արվում ե հաղնիելու սե-  
նյակում :Մենք պետք ե այդպիսի բաղնիքներ  
կառուցենք քաղաքներում, արդյունաբերա-  
կան կենտրոններում, խոշոր նորակառույց-  
ներում, խորհտնտեսություններում և մեծ կու-  
տնտեսություններում :

Յեղած բաղնիքները պետք ե մաքուր պա-  
հել և պարբերաբար դեղինսեկցիա (միջատնե-  
րի վոչնչացում) կատարել այդտեղ : Բաղնիք-  
ներում առանձնապես վտանգավոր են անհա-  
տական պահարանները, ուր դրվում ե լողա-  
ցողի հագուստը : Այդ պահարանները պետք ե  
հաճախակի ախտահանման յենթարկել : Բացի  
բաղնիքներից, անհրաժեշտ են լվացքատը-  
ներ կազմակերպել և առաջին հերթին՝ քա-  
ղաքներում, նորակառույցներում, արդյունա-  
բերական կենտրոններում, խորհտնտեսու-  
թյուններում ու խոշոր կոլտնտեսություննե-  
րում :

Մնացած բոլոր այլ վայրերում, վորտեղ  
բաղնիքներ ու լվացքատներ չկան, պետք ե  
յուրաքանչյուրը լավ հիշի, վոր համենայն  
դեպս լողանալն անհրաժեշտ ե, վորովհետե-  
ահապես մենք կարող ենք խիստ վոյլոտել:  
Վոյլիներից ազատ մնալու համար անհրա-  
ժեշտ ե գոնե 15 որը մեկ անգամ լողանալ և  
ամեն ունգամ լողանալուց հետո մաքուր սպի-  
տակեղեն հագնել, այլապես՝ լողանալն իզուր  
կանցնի : Լողանալ կարելի յե և տանը, միայն  
թե ցանկություն լինի և մաքուր լինելու ան-  
հրաժեշտության դիտակցություն : Սպիտակե-

ղեն և անկողին լվանալու, ինչպես և լողանա-  
լու համար, պարզ ե, վոր ոճառ ե հարկավոր :  
Այն ոճառաբաժինը, վոր ստացվում է կորպե-  
րացիալից, հաճախ կանոնավոր կերպով չի ոգ-  
ագործվում . ոճառն ընտանիքում բաշխվում  
է վոչ այնպես, ինչպես հարկավոր ե : Հաճախ  
տեսնում են, վոր յերկու բանվոր միևնույն քա-  
նակությամբ ոճառ են ստանում, բայց ատար-  
բեր ձեռվ են ողագործում իրենց ոճառը :  
Նրանցից մեկը կանոնավոր կերպով ողագոր-  
ծելով իր ոճառը՝ բոլորովին ազատ ե լինում  
վոյլիներից, իսկ մյուսը նույնպես գործ ե ա-  
ծում իր ստացած ոճառը, բայց վոյլոտ ե  
մնում : Ի՞նչով բացատրել այդ : Նրանցից  
մեկը, բաղնիքում կամ տանը լողանալուց  
հետո մաքուր սպիտակեղեն (լվացած և լվանա-  
լուց առաջ մի ամբողջ ժամ յեռացված) ե հագ-  
նում, փոխում և սպիտակեղենը բարձր յերեսը և այլն,  
և այլն, վորոնետե նա գիտե, վոր վոյլիները կա-  
րող են բուն դնել և սպիտակեղենի վրա, և' ան-  
կողնի վրա : Իսկ մյուս բանվորն այդ չգիտե :  
Յեկ չանելով այդ, նա միշտ ել կեղտուտ ու վոյ-  
լոտ ե մնում : Բայց լինում ե և այսպես, ոճա-  
ռը ձեռք ե բերվում մի կտորը մյուսի հետեւից  
և այնպես ել մնում ե առանց գործածության.  
մինչդեռ ինքը ձեռք բերողը ամբողջովին վոյ-  
լոտ ե լինում : Այդ ել մի բան չե : Վոյլիները  
մեր թնշամիներն են, և մենք պետք ե աղատ-  
վենք նրանցից : Միայն մաքությամբ (բաղնիք  
ջուր, ոճառ) և խելացի սանիտարական ոեժի-  
մով կարելի յե հեշտությամբ վերջ տալ վո-

ջիւներին։ Մաքրությունը վոջիլների թշնամին է։

Վոջլոտության դեմ պայքարելու ամենակարևոր ու առաջնակարգ խնդիրը բաղնիսի գործի կազմակերպելն է, առանց վորի վոջլոտության դեմ պայքարելը դժվարին է։ Բաղնիս սարքելիս՝ միշտ պետք է հիշել, վոր բաղնիսը պետք է լինի անցողական տիպի (հանվելու տեղ, լողանալու տեղ և հաղնվելունն ու բիշ տեղ) ունենա դեղինքեկցիոն (ախտահանական) սենյակ (կամերա)։


Պարզ է, վոր վոջլոտության դեմ արմատական պայքար մղելու համար պետք է ունենալ հետեւյալ յեռյակը—ջուր, սպիտակեղենն և ոճառ։ Մարդուն վոջիլներից ազատելու համար, անհրաժեշտ է վոչնչացնել վոչ միայն մարմնի, գլխի, այլև սպիտակեղենի, չորերի ու անկողնի մեջ գտնված վոջիլները, այլև նույնիսկ բնակարանի (չափազանց վոջլոտության դեպքում)։ Ոճառ չլինելու դեպքում և առհասարկ լվանալու միջոցների պակասության պատճառով, կարելի յե և պետք է ողտվել մոխրով, մոխրաջուվ (պլու)։) Ավելորդ չի այստեղ հիշատակել, վոր մոխրաջրի ախտահանական հատկությունը ժամանակին ուսումնասիրված է։ Մոխրաջուր պատրաստելու համար 12 լիտր ջրին վերցնում են 1,5 կիլո (մոտ 4 ֆունտ) մոխրի։ Խառնելով կրակի վրա՝ լսով յեփում են ու սառցնելուց հետո, յերբ ծորում են, ստացվում ե «ուժեղ չչելոկ»։ Այդ մոխրաջուրը պետք է պահել վեղրոյի կամ

մի փոքրիկ տակառի մեջ, բերանը միշտ փակ։ Մոխրաջուրը գործ են ածում հետեւյալ յեղանակով 1) Սպիտակեղեն լվանալու համար մի մաս մոխրաջրին խառնում են մի մաս ջուր (յեթե սպիտակեղենը խետա կեղտութե), կամ մի մաս մոխրաջրին յերկու մաս ջուր (յեթե սպիտակեղենը չատ կեղտութ չի)։ Այդ խառնուրդի մեջ սպիտակեղենը յեփում են, ըստ վորում, նպատակահարմար ե մի վեղրու խառնուրդին ավելացնել  $\frac{1}{4}$  բաժակ նավթ (կերասին)։

2. Մարմինը լվանալու համար մի մաս մոխրաջրին պետք է խառնել 3 մաս ջուր։ Մոխրաջուր պատրաստելու համար, կարելի յե գործածել թղթենու (ներզա), սոճու (օօշա) յեղելնու (ոլլ), կամ կաղնի ծառի մոխրը, միայն մաղելուց հետո։ Մոխրը պետք է պահել չոր տեղ։

Նկատի առնելով, վոր բարձր ջերմության աղեցցության տակ վոջիլներն ու նրանց ձվիկները վոչնչանում են, այդ միջոցի նպատակահարմար գործադրությամբ կարելի յե լավ հետեւանքների հասնել։ Այդ նպատակի համար զանազան տաքացնող ապարատներից մենք խորհուրդ կտայինք ընտրել բանվորական ըլլուցների, ՄՏԿ խորհունությունների և մեծ կոլտնտեսությունների համար չելիսու, իսկ փոքր կոլտնտեսությունների, գյուղերի ու այլ տեղերի համար՝ վոջիլ ջարզող կամերաները։ Չելիսու, ալիքավոր (վօլուստօ) յերկաթից պատրաստած մի արկղ. ե , վոր դըր-

ված ե յերկաթյա վառարանի վրա: Արկղի  
մեջ տեղավորված ե մի թմբուկ, վորը պտույտ-  
ե գալիս հորիզոնական առանցքի շուրջը:  
Վոլոտ իրերը դրվում են այդ թմբուկի մեջ:




Նկ. 6. Հելիոսի նկարը

Վառարանի ծուխն անցնում ե թմբուկի շուրջը և տաքացնում ե նրան: Հելիոսի մեծությունը սովորաբար այնքան ե լինում, վոր նրա թմբուկի մեջ մի անգամից կարելի յե աեղավորել 8-10 կոմպլեկտ իրեր: Վորապեսզի Հելիոսը կանոնավոր կերպով աշխատի, պետք

ե միշտ աչքի առաջ ունենալ հետեւյալ պայմանները:

1) Հետեւել ջերմության աստիճանին,  
վոր չըարձրանա թելսուսի 120 աստիճանից



Նկ. 7. Հելիոսի թմբուկը

մինչև 140 աստիճան, պահելով 100 աստիճանից վոչ ցածր:


2) Անհրաժեշտ ե վորոշ չափով խոնավաց նել ողը, ածել ներսը ջուր: 3) ծխի քաշումը պետք ե լինի կանոնավոր, իսկ տաքացումը լրիվ: 4) ապարատի թմբուկը շարունակ պետք ե պտտել, վոր տաքացումը շորերի գանագան

անկյուններում լավ կատարվի, մյուս կողմից՝  
շորերը չայրվեն:

5) Իրերը թմբուկի մեջ պետք է դնել այն-  
պես ցանցառ կերպով, վոր տաքացած ողի  
ազատորեն մուտք գործի ամեն տեղ.

6) Իրերը թողնել թմբուկի մեջ 30 լոպե:

7) Խնամատար վերաբերմունք ունենալ գե-  
պի ապարատը:



8. Գիտնատառն Ի. Փամեր:


Արագությամբ կառուցելու նպատակով  
գործ և ածվում և այսպես կոչված զետնատում  
կամերան, վորը շինված է գետնի մեջ յերկու  
դռներով և յերկու մաքուր և կեղտոտ հակա-  
դիր բաժանմունքներով իրերի համար: Կամե-  
ռայի չափը խորհուրդ ենք տալիս վերցնել  
 $2,5 \times 4,5$ , իսկ բարձրությունը՝  $2,2$  (մետրե-  
րով): Կամերայի տաքացումը կատարվում է  
յերկու յերկաթյա վառարաններով, վորոնք  
դրված են կամերայի հակադիր կողմերում:  
Վառելու տեղը պետք է անել գրսից, իսկ ծրի-  
նելույղի խողովակները պետք է անցկացնել  
կամերայի ներսի պատերով:

Զերմությունը անհրաժեշտ է պահպա-  
նել վոչ պակաս 100 աստիճանից, իսկ ախտա-

հանման տեվողությունը 25–30 րոպեյից վոչ  
պակաս:

Քարե կամերան հիմնված է տաք ողի և  
խոնավության միաժամանակ գործադրմանը

### ԿԱՄԵՐԵՐ - ԿԱՄԵՆԻԿԻ




Նկ. 9. Քարե կամերան:

Վրա: Այս վառարանը շինված է աղյուսից,  
վորի կամարաձև առաստաղում թողնում են  
կլոր քարերով կամ աղյուսով չարված անց-  
կած (ծակեր): Կամերան գանվում է վա-  
ռարանի վրա: Իրերը դնում են այնտեղ նա-  
խորոք, կամ կամերայում պատրաստվում  
է առանձին շարժողական տեղ (բալիսա):  
Վառարանը վառելիս, յերբ առաստաղի քա-  
րերը խիստ տաքանում են, նրանց վրա  
ջուր են ածում, վորով լցվում ե տաքացած  
դոլորչի: Կամերայի չափերը խորհուրդ ենք  
դոլորչի:

տալիս վերցնել 1,55X1,95X0,85(մետրներով): Տաքացնող կամերաները լավ են աշխատում միայն այն ժամանկ, յերբ նախ իրերը դառավորված են այնտեղ ցանցառ կերպով և յերկրորդ, յերբ այնտեղ տաքացած ողի ազատ շարժում կա և ջերմություն՝ 100 աստիճանից վոչ պակաս և 120-140 աստիճանից վոչ ավել: Կամերաները պետք է ունենան ջերմաչափ, վորպեսզի հնարավոր լինի հետեւ դեղինսեկցիայի ընթացքին՝ կես ժամվա միջոցում:

Վոջլոտության գեմ պայքարելու մի լավ միջոց ել, դա սնդուկի նման մի արկղ է, վորը կերմետիկ կերպով փակվում է և ներսում բենզին և գործադրվում (չպետք է մոռանալ, վոր բենզինը կրակից շուտ բռնկվող նյութ է): Այդ բենզինի արկղների գործածությունն առավելապես նպատակահարմար է փոքրիկ բուժսանիտարական հիմնարկներում, բանվորական փոքրիկ բարակներում և գյուղացիական փոքրիկ տնտեսություններում: Լարարատորիական փորձերը, վոր մենք կատարել ենք սանիտարիայի և հիգիենայի ինստիտուտում, վոջիլները վոչնչացնելու համար, ցույց տվին, վոր բենզինի գոլորշին, վերցրած 0,5 կամ ամենաշատը 1,0 խոր. սմ. 1000խոր. սմ. (մի լիտրին), (այսինքն՝ 1000 խոր. սմ. ծավալին պետք է վերցնել 0,5 կամ 1,0 խոր. սմ. բենզին), չատկարձ ժամանակում բոլորովին վոչնչանում են վոչիլները ու նրանց անիծը: Այդ նպատակի համար բավական ե ունենալ մեկ արկղ՝ մի խոր. մետր ծավալով, գերեմետիկ կերպով փակվող

և այնպես շինված, վոր տախտակներն արանքներ և անցքեր չունենան (ցանկալի յեղակով պատաժ լինի): Արկղի հատակին, մի անկյունում դրվում ե բենզին մի ամանի մեջ լցրած և ծածկված մետաղյա ցան-



Նկ. 10. Բենզինի արկղ:

յով, վերեռում նշած չափով (1-1000) և ապա ցանցառ կերպով գրվում են արկղի մեջ չորերը կամ սպիտակեղենը՝ մոտ 2-3 ժամ ժամանակով: Այդ միջոցը տեխնիկական գործադրման ահասկետից չափազանց պարզ է: Պետք է յենթադրել, վոր այդ մատչելի եժան ու հուսալի միջոցը գործադրման լայն տարածում կունենա: Շատ լավ է ներդործում վոչիլների ու

անիծների վրա և սովորական նավթը (չորեքը կամ սպիտակեղենը նավթի մեջ թրջելիս կամ նրանց վրա նավթ սրսկելիս՝ վոջիլներն ու անիծները վոչնչանում են 1-2 բովելից հետո): Ճերմակեղենը, անկողնու պարագաները, և այլն վոջիլներից ազատելու համար, չափազանց հասարակ ու արմատական միջոց են նրանց յեփ տալը մոխրաջրի մեջ: Վոջիլներն ու նրանց չափազանց դիմացկուն ձվիկները յեռացող ջրի մեջ արագությամբ վոչնչանում են: Վերեկի չորերն ու առհասարակ այն իրերը, վորոնց յեփ տալ չի կարելի, և բենզինի արկղով ոգտվելու հնարավորություն չկա, նպատակահարմար ե մաքրել վոջիլներից կոշտ խողանակով, թըրջված զանազան քիմիական նյութերով: Այս վերջիններից լավ են, եժանության և ախտահանական տեսակետից, ոճառակրեգույան պրեպարտները, փորոնք շատ կարճ ժամանակում վոչնչացնում են միջատներին: Այսպես, որինակ՝ կրեզուլան նավթալիզոլի 10% լուծվածքում թրջված սպիտակեղենի վոջիլներն ու անիծները բոլորովին վոչնչանում են: Ինչպես վերևում առվեց, նավթալիզոլի ամենալավ լուծվածքը նրա 10 տոկոսային լուծվածքն է: Սակայն կարելի յեզրութածել 2-5% լուծվածք, սրսկման միջոցով: Թե սրսկումը (պուլվերիզացիա) և թե մեքենայական մաքրումը պետք է կատարել խնամքով և մեծ դգուշությամբ. Նավթալիզում ողբեկը չափազանց նպատակահարմար ե հոսող (տեկущий) կազմ ունեցող բանվորական բարակներում:

Այդ լուծույթն ավելի լավ է ներդործում և պետք է գործադրել քանի նա տաք է: Սպիտակեղենն ախտահանման յենթարկելու համար սուզում են տաշտի մեջ, ուր լցված են նավթալիզոլի 10 տոկոսային լուծույթը: Հետո սպիտակեղենը վորքան հնարավոր է ուժեղ կերպով քամում են: Միևնույն լուծույթով կարելի յեղանակ 3-4 անգամ:

Ուր հնարավոր է՝ սպիտակեղենը, անկողնու պարագաները և այլն, պահում են նավթալիզոլի մեջ ավելի յերկար ժամանակ, վորով հնարավորություն և ստեղծվում գործածել վոջիլների ու անիծների վոչնչացման համար նավթալիզոլի ավելի թույլ լուծույթներ, այն ե՝ 3% և 5 տոկոսային լուծույթ: Նավթալիզոլի 3 տոկոսային լուծույթում վոջիլները վոչնչանում են մոտ յերկու ժամվա ընթացքում. 5 տոկոսային լուծույթում վոջիլները վոչնչանում են մոտ կես ժամվա ընթացքում, իսկ 10% լուծույթում՝ 10-15 րոպեյում: Ինչպես վերևում առվեց, չորերը վոջիլներից ազատելու համար, կարելի յեզրութածել մեքենայական մաքրում: Մաքրումը աղետք է կատարել մեծ խնամքով, խոզանակի միջոցով, վոր պետք է թրջել նավթալիզոլի 10 տոկոսային լուծույթի մեջ. յեթե խոզանակ չկա, կարելի յեզրութածե փալատի կտորով: Նույնպես լավ ազգող, բայց թանդարժեք միջոց է լիզոլը, վորը գործ է ածվում հաճախ 1 տոկոս, 2 տոկոսային, 3 տոկոսային և, հաղվադյուտ գեպքերում՝ 5 տոկոսային լուծույթներով:

Մարմնի մազոտ մասերում գտնվող վոջիլներից ազատվելու ամենահիմնական միջոցն է՝ մաղերի հեռացնելն ու մաքրելը։ Յեթ այդ միջոցը գործադրելու հնարավորություն չկա, այդ դեպքում վոջիլներն ու անիծները վոչնչացնելու նպատակով բենզին ե գործադրվում։

Պետք ե բենզինի մեջ թաթախված մի շորի կտորով լավ թրչել մարմնի մազոտ մասերը։ Կարելի յե նույնպես բենզինով կոմպրեսոնել գլխի վրա 10 բոպեյի տեվողությամբ։ Այդ ժամանակամիջոցում վոչնչանում են թե վոջիլները և թե անիծները։ յավ ե ներդործում նաև մի շատ եժան միջոց՝ քացախը վորով թրջում են մաղերը լիճանարուց առաջ։ Նա լուծում ե անիծների սոսնձային նյութը, վորով նրանք կպած են լինում մազերին։ Մնացած բազմաթիվ միջոցների վրա մենք կանոք չենք առնում։ Նրանք բոլորն ել հիմնականում նույնն են, ինչ վոր առաջ բերինք վերեվում։ Հարկավ, յեթե շրջանում դոյսություն ունի յապոնական տիպի ախտահանական շոգեկամերա կամ ժետազյա շոգե-ֆորմալինային կամերա, առաջին հերթին պետք ողտվել նրանով, վորով-հետեւ դեղկամերան վոչ միայն վոչնչացնում ե միջատներին, այլև սպանում ե զանազան հիվանդությունների միկրոբներին։

Բարակներում ե այլ տեղերում, ուր շատ և տարածված վոջլոտությունը, նպատակահարմար միջոց ե համարվում բնակարանը ծծում-բով ծխելը։ Այդ նպատակով դործ են ածում ծծմբի կտորները (կարելի յե և փոշի)։ ծծում-

բը վերցնում են 50-ից մինչև 100,0 յուրաքանչյուր խոր։ մետրի համար և վառում։ Այդ միջոցը գործածելիս՝ պարտավորաբար պետք են կատի առնել հետևյալ պայմանները։

1. Բնակարանը չպետք ե ունենա վոչ մի անցք, վորից ծծմբային գազը կարողանա դուրս գալ։ Դրա համար նախորոք պետք ե լավ փակել բոլոր անցքերը (թուղթը վազելինով) ու ծեփել բոլոր մեծ ու փոքր անցքերը։

2. Բարձր բնակարանները (3 մետրից բարձր) սովորաբար խորհուրդ չենք տալիս ծծումբով ծխելու, վորովհետեւ ծծմբային գազն իր տեսակարար կըովկ ողից ավելի ծանր լինելով՝ չի կարող մնալ բարձր շերտերում։

3. Պետք ե ձեռք առնել բոլոր նախազգուշացուցիչ միջոցները հրդեհի դեմ։

4. Ծծումբը պետք ե վառվի արագությամբ, վորովհետեւ ստացվող գազը կարող ե ազդել միջատների վրա միայն այն ժամանակ, յերբ ողը կարծ ժամանակամիջոցում ամենամեծ չափով հագեցած կլինի ծծումբով։ Հակառակ դեպքում միջատները միայն ուշաթփված են լինում, ծխման գործողությունից մի առժամանակ հետո, նորից կենդանանում են։ Ծծումբի այրումը կարելի յե կատարել հասարակ կրակարանի (մանղալի) վրա շիկացած ածուխով, բայց ավելի յավ ե ունենալ շրջաններում պատրաստի ծծումբ այրելու ապարատներ։

5. Ծծումբի ներդործումը կարելի յէ լրիվ համարել միայն այն դեպքում, յերբ ծխվող բնակարանը 12-24ժամ շարունակ մնում ե փակ, իսկ ծայրահեղ դեպքում՝ գոնե վոչ պակաս քան 7-8 ժամ.

6. Բնակարանի ջերմությունը, ուր վառվում ե ծծումբը, չպետք ե 15 աստիճանից պակաս լինի:

7. Կտորեղեն գործվածքները սովորաբար փշանում են, համենայն դեպս նրանք նախորոք պետք ե չորացված լինեն; Մետաղյա իրերը նույնպես փշանում են:

Բացի հիշատակված պակասություններից, պետք ե նշել և այն, վոր ծծմբային գազը խորը չի մտնում իրեղենների մեջ և պատերի ու տան կահկարասիքի ծակերի ու անցքերի մեջ: Բացի այդ, նա գրգռում ե աչքի թաղանթն ու շնչառության ճանապարհները և ունի խեղդիչ հոտ:

Այսուամենայնիվ ծծումբի դրական կողմերը այնքան մեծ են, վոր միանգամայն մեզ բավարարում են:

Գյուղական վայրերում, ուր կան թոնիրներ և ուրիշ միջոցներ գործադրելու հնարավորություն չկա, առաջարկվում է շորերը թափ տալ թոնիրներում: Սովորաբար հաց թիկելուց հետո թոնիրներում տաքությունը պահպանվում ե յերկար ժամանակ. մեր անձնական փորձը ցույց ե տալիս, վոր գյուղական կյանքի պայմաններում այդ միջացը տալիս ե համապատասխան լավ եֆֆեկտ: Այդ միջոցի գոր-

ծադրումը կարելի յէ առաջարկել անհատական տնտեսություններին: Սպիտակեղենի ու շորերի արգուկելը նույնպես լավ հետեւաք և ունենում:

Վերեվում հիշված բոլոր միջոցների գործադրումը վոչ մի հետեւանքի չի հասցնում, յեթե միջոցներ ձեռք չեն առնվի հեռացնելու կենցաղային այն պայմանները, վորոնց շնորհիվ առաջ են դալիս ու զարգանում վողիլները: Այլ կերպ՝ վողիլները նորից առաջ կգան: Պայքարը վողիլների գեմ պետք ե վարել սիստեմատիկ և համառ կերպով, միաժամանակ չմոռանալով հանրամատչելի դարձնելու առաջարկված միջոցներն աշխատավորությանը և վերադիններին լայնորեն մասնակից դարձնել միջատրի դեմ տարվող պայքարին:

Հանրակացարաններում և ընդհանուր բարակներում ապրող մարդիկ (բանվորները, ուսանողները և այլն) վողլոտության դեմ պետք ե միջոցներ ձեռք առնեն կազմակերպվածորեն և միասնաբար, վորովհետև այլապես վողիլը մեկից կարող ե անցնել մյուսին և այդպիսով նորից առատ վողլոտություն առաջցնել:

Բացի վողլոտության դեմ կիրառվող հիշյալ ձեռնարկումներից, անհրաժեշտ ե ուշադրություն դորձնել և մի շարք այլ, «մանր» միջոցների վրա, վորոնք եյապես կարեվոր նշանակություն ունեն: Այդպիսի միջոց ե, որինակ, ոյն, վոր պետք ե հրաժարվել միասին պառկելուց, մի սովորություն, վորը, դժբախտագործ,

դեռ բոլորովին վերացած չի մեր կենցաղից, վորովհետև միասին քնելով՝ մարդիկ հաճախ վարակում են միմյանց վորիլներով։ Հանրակացարաններում, բանվորական բարակներում, նորակառույցներում, արդյունաբերական կենտրոններում և խորհտնտեսություններում անհրաժեշտ ե միշտ առանձին մահճակալներ ունենալ։ Պետք ե աշխատել, վոր կոլտնտեսականներն ու մենատնտեսները նմանապես սուվորություն դարձնեն առանձին քնելը։ Այդ տեսակետից առանձապես վտանգավոր ե գյուղական կենցաղում նկատվող այն յերեվույթը, վոր ընտանիքի բոլոր անդամների անկողինները մի տեղում են դարսում։ Յեթե դրան ավելացնենք և այն, վոր անկողին մի մասից ոգտվում են յեկվոր հյուրերը, ապա վորջիլներով վարկվելու վտանգն ել ավելի անկնհայտնի կդառնա։ Այնուհետև չպետք ե յերկար մազեր և յերկար մորուք թողնել, վորովհետև, ինչպես մեղ հայտնի յե, մազերը հաճախ վորջիլների համար հարմար ապաստան են հանդիսանում։ Մազերը պետք ե կարճ խուզել։

Վորջոտության և, հետեւաբար, բժամոր տիֆի դեմ հաջողությամբ պայքարելու համար անհրաժեշտ ե նաև խիստ մաքրություն պահպանել գյուղացու տներում, հյուրանոցներում, իջելաններում, ուր մարդիկ են դալիս զանազան տեղերից, վորոնց մեջ լինում են և վորջու և վոչ վորջու մարդիկ։ Այդպիսի տեղերը հեշտությամբ կարող են վարակի հնոց դառնալ։ Ուստի

որի և հիշյալ տեղերում՝ յուրաքանչյուր հաճախ խորդից հետո անկողնի պարագաները պետք ե անպայման վորիվեն և, մինչև լվանալը, ախտահանության յենթարկվեն։ Իսկ թե ինչպես պետք ախտահանել, այդ մասին ել պետք ե սանիտարական բժշկին հարցնել։ Բժագոր տիֆի դեմ կանխիչ միջոցներ ձեռք առնելու տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում սեղոնային բանվորները, վորոնք նախքան աշխատանքի անցնելը, պետք ե սանմշակման յենթարկվեն (մազերը խուզելը, բաղնիք, սպիտակեղենը փոխելը, թարմ անկողին)։ Նույնական կարդ պետք ե սահմանվի և մեր գործարաններում, Փաբրիկաներում, ձեռնարկություններում, նորակառույցներում, խորհտնտեսություններում, վորտեղ աշխատանքի յեն լընդունվում նոր բանվորներ։

Մանկական հիմնարկներում (դպրոց, մանկապարտեզ, մսուր, կոնսուլտացիա և այլն) պետք ե առանց հետաձգելու և բոլորովին արմատախիլ անել վորջուտությունը։ Վոչ մի վորջու դպրոցական, վոչ մի վորջու պիտոնը չպետք ե լինի։ Վորջու աշակերտին պետք ե ուղարկել ծնողների մոտ և պահանջել, վոր վերջիններս մաքրու պահեն իրենց յերեխաներին։ Այդ տեսակետից մեծ ե պիտոնի կազմակերպության դերը և շատ ոգտակար կլինի այն, վոր Շիքսաններին պարբերաբար ու քննեն՝ վորջուտություն հայտաբերելու նպատակով։ նման ձեռնարկումները, կրկնում ենք, հոկայտկան

հպնություն կլինեն վոչլոտության դեմ մղովզ  
պայքարի գործում :

Պարզ է, վոր սանիտարական հսկողություն-  
ու պետք ե ուժեղ լինի և կալանավայրերում,  
վորտեղ ամեն մի նոր յեկած կալանավոր պետք  
անմշակման յենթարկվի, վորպեսզի չվարակի  
մյուսներին : Բացի դրանից, անհրաժեշտ ե,  
վոր կալանավայրերում սանմշակումը պարբե-  
րուկան (մշտական) ընույթ կրի . պետք ե մի-  
ջոցներ ձեռք առնել, վոր կալանավորները  
հաճախակի խուզեն իրենց մազերը, բենդին  
քսեն մարմնի մազոտ մասերին, լողանան, սպի-  
տակեղենը և կամերաները ախտահանման յեն-  
թարկեն և այլն :

Անկասկած, մեր հիվանդանոցները և  
առողջապահական մյուս հիմնարկներն իրենք ել  
պետք ե պատշաճ բարձրության վրա կանգնած  
լինեն : Մեր հիվանդանոցները կարող են և պետք  
ե ազատ լինեն վոջիլներից, վորովհետև բու-  
ժական հիմնարկներն իրենց անմիջական բու-  
ժական և առողջապահական նպատակներից  
դատ պետք ե որինակ լինեն շրջալատողների  
համար, և որինակելի ու մաքուր հիվանդանո-  
ցից տուն գնացող հիվանդն իր կեցնազը կիսո-  
ւի :

Վերը բերված բոլոր ձեռնարկումների իրակա-  
նացումը, իհարկե, սկզբում դժվար կլինի, բայց  
այդ բոլորը միանգամայն հնարավոր ե, այդ  
անհրաժեշտ ե : Պետք ե համառորեն ու պար-  
բերաբար մաքրվել վոջիլներից : Այլապես վոչ-

լուանթյուն կլինի, բծավոր տիֆ կլինի : Յեթէ  
վոչ այսոր, ապա վաղը այդ հյուրը բծավոր  
տիֆը մուտք կգործի մեր կենցաղի մեջ : Այն  
ժամանակ արդեն մենք կառուժենք, այն ժա-  
մանակ գուցե արդեն ուշ լինի շատերի համար :

Բայց ի՞նչ պետք ե անել, յեթե այս կամ  
այն ճանապարհով բծավոր տիֆը մուտք գոր-  
ծի մեղ մոտ : Յեթե նա արդեն մուտք ե գոր-  
ծել, ապա վախենալու, գլուխը կորցնելու  
ոկետք չկա : Պետք ե միջոցներ ձեռք առնել,  
վորպեսզի բծավոր տիֆը վոչնչացվի տեղն ու  
տեղը : Վորո՞նք են այդ միջոցները :

Ամենից առաջ, չպետք ե թագյունել բծավոր  
տիֆի դեպքերը : Յուրաքանչյուր նոր դեպքի  
մասին պետք ե անմիջապես հայտնել տեղական  
բժիշկներին, սանիտարական բժշկին : Տեղե-  
կացնելով այդ մասին Այրաժնին՝ մենք ժամա-  
նակին լիկվիդացիայի կենթարկենք այդ վարա-  
կը : Վարակի տեղը յեկած բժիշկն անմիջապես  
կապարզի, թե զորտեղից ե առաջացել այդ վա-  
րակը և ել ո՞ւմ կարող եր նա վարակել : Հի-  
վանդի շրջապատողները, վորոնց կծել են բծա-  
վոր տիֆով հիվանդի վոջիլները, կարող են  
հիվանդության դեռ թագուն շրջանում լինել.  
ուստի և բժիշկը նրանց իր հսկողության տակ ե  
առնում 14 որ շարունակ : Յերբ բժիշկը դիագ-  
նոզ ե դնում և գտնում ե, վոր հիվանդությու-  
նը բծավոր տիֆ ե, նա իսկույն այդ հիվանդին  
տեղափոխում ե մի առանձին հիվանդանոց,  
վորտեղ մասնագետ բժիշկները հիվանդին

բժշկում են այնպես, ինչպես հարկն ե, սբուկում՝  
ներ են անում և ընդհանրապես գործ են դնում  
բոլոր անհրաժեշտ միջոցները։ Միաժամանակ  
այն տանը, վորտեղից հիվանդը բերված ե  
հիվանդանոց, ախտահանություն ե կատա-  
վում։ Այլապես հիվանդը, մնալով իր տանը,  
կարող ե վարակել իր ընտանիքի մյուս ան-  
դամներին, հարեվաններին, այցելուներին և  
շատ ուրիշներին։

Այդպես ե բծավոր տիֆը։ Վոռ  
ջիլների ու բծավոր տիֆի դեմ կովելու ան-  
հրաժեշտությունը պարզ ու հասկանալի յե։  
Խորհրդային առողջապահությունը ձգտում ե  
վոչ միայն բժշկել հիվանդին, յերբ նա արդեն  
վարակվել ու հիվանդացել ե, այլ նա առաջին  
հերթին և գլխավորապես ձգտում ե կանխել  
հիվանդությունը։ Խոկ բծավոր տիֆը կանխե-  
լը վոջլոտությունը վերացնել ե նշանակում։  
Եեթե վոջիլ չկա, ապա չկա և բծավոր տիֆ։  
Կարելի յե և պատվաստումներ անել բծավոր  
տիֆի դեմ՝ չհիվանդանալու համար, բայց այդ  
դժվարին ու պայքարի վոչ այնքան հուսալի մի-  
ջոց ե։ Բծավոր տիֆի դեմ պայքարելու ամե-  
նահուսալի միջոցը վոջիլներին վոչնչացնելն ե։  
Խորհրդային յերկրում չպետք ե լինի վոչ  
մի վոջլուր քաղաքացի։



6537

ԳԻԱԸ 35 ԿՈՊ.



Դ-ր Ա. Բ. Ալեքսանյան

Сыпной тип

Гиз ССР Армении, 1934 г., Эривань